

## ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի շնորհավորական ուղերձը Գիտելիքի օրվա կապակցությամբ

Սիրելի դպրոցականներ և ուսանողներ, ուսուցիչներ և ծնողներ,

Շնորհավորում եմ ձեզ սեպտեմբերի մեկի՝ Գիտելիքի օրվա և նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ:

Այս օրը սիրելի է բոլորի համար, քանզի հայ ժողովուրդը միշտ էլ կարևորել է գիտելիքը, և որակյալ կրթությունը մեր ժողովրդի կյանքում միշտ էլ եղել է գերակա նպատակ:

Առանձնակի ջերմությամբ ուզում եմ շնորհավորել բոլոր ուսումնական հաստատությունների շեմն առաջին անգամ ոտք դնողներին՝ նրանց մաղթելով լուսավոր ճանապարհ և բարձր առաջադիմություն, իսկ մանկավարժներին, ում վստահված է սերունդների կրթության և դաստիարակության դժվարին գործը, հաջողություններ իրենց շնորհակալ աշխատանքում: Թող տոնական այս խանդավառությունը նրանց ուղեկիցը լինի կրթության բոլոր աստիճաններում:

Միանալով դպրոցի և ուսումնառության զարգացմանը միտված ձեր բոլոր ջանքերին, սիրելի ուսուցիչներ, վստահ եմ, որ շնորհիվ ձեզ, նոր ուսումնական տարին կլինի առավել հազեցած և արդյունավետ՝ ի նպաստ այսօրվա և վաղվա Հայաստանն ու Սյունիքը կերտող քաղաքացու ձևավորման ու ինքնահաստատման ուղու ընտրության:

Թող, որ այս ուսումնական տարին լինի ավելի արգասաբեր ու նոր հաջողություններ բերի մեր աշակերտներին և ուսանողներին, ուսուցիչներին ու դասախոսներին:

Շնորհավորում եմ բոլորիդ Գիտելիքի օրվա առթիվ:

ՀՀ Սյունիքի մարզպետ

Ս.Խաչատրյան

01.09.2011թ